



ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՓՈՍ ԱԲՐԱՀԱՄՑԱՆ

(Վեատեսուշ Հոգեու Ռեմարտնի)

ԷՇՄԻԱՆԻՆ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՈՐ

(Ականատեսի վկայություններ)

 չմիածի՞ն... առինքնող անուն, որ ցունց կհանե ամբողջ էությունը մարդուն: Դարերու հիշատակներու ամբողջ շարան մը, տիսուր և ուղախ օրերու պատմությամբ: Էջմիածի՞ն, որուն նյութական կառուցքը ոգիի է վերածված, ու այդ ոգին շաղախված է ընդմիշտ մեր ժողովրդի արյունին մէջ: Այլևս նյութ չէ ան, և ոչ ալ կերտվածք, ոչ շենք մը լոկ և ոչ ալ Տաճար մը միան, այլ խորհուրդ է ան և տեսիլք՝ մեր ժողովրդի ինքնագիտակցության մէջ: Էջմիածի՞ն, հրեղեն սյունը, ամպհովանին, հավատքի ջահը, ոսկի ունակը և սնուցիչ մայրը հայ ժողովրդին: Իր անունը՝ ավետիս, իր փայլը՝ լուսո շող, իր Տաճարը՝ հոգիներու կերտվածք, ամեն բան, ամեն ինչ՝ իր հավատացյալներուն համար:

Տարիներու տեսնդագին երազ էր դարձած ինձ՝ տեսնել այս ամենը: Երազ՝ ինչպես շատ շատերու ինձ կվիճակվեր տիսուր առիթով մը այցելել մեր արևաշող Հայրենիքը և գոնմիլ էջմիածնի հին կամարներուն տակ:

Դարուն, Հայաստանի ծաղկագարդ դարուն 1954 տարվան: Հայրենիքիս լեռներն ու ձորերը, դաշտերն ու հովիտները ալ ու ալ-

վան են հագեր, երբ Հայաստանի պայծառ արեւ իր կենսունակ ճառագայթները սփռեր էր մեր երկրի վրա, երբ կյանք ու կենդանություն առած ամբողջ երկիրը հերքի մէջ էր, այդ օրերուն, Ս. էջմիածնի կամարներուն տակ, իր հավիտենական հանգիստը մատած էր Գնորդ Զ հայրենասեր Կաթողիկոսը: Տիսուր օրերու սևազգեստ ուժատավորն էի, ու հովվուս մէջ խոռված կալեկոծեր... Աղի արցունք, մոայլ դեմքեր, սև շղարշներ—այս էր բաժինը կարծես այդ օրերուն Մայր Տաճարին: Անոր զանգակները... Հատ-Հատ: Օրեր, օրեր շարունակ: Հոգեկան միսիթարություն: Հայրենիքի վերելքն ու անոր հարանուն փառքը, որ սպեղանին էր լոկ մեր զարնը ված հոգիներուն: Երնե՞կ, ո՞ւ էր, թե երկուքն ի մի գտնեինք, այդ օրերուն: Բայց մարդուն հոգին միշտ լավագույնին կը ծըգտի, ու միտքս կուզա սաղմոսիբրդուին խոսքը թե՝ «Յուա առ Աստուած և խոստովանեանմա» (Սալմ. ԻԱ. 6):

Տարի մը վերջ... Դարձյալ էջմիածնի մէջ եմ: Ո՞ւ է հին օրերու տեսաքը մէծ Սըրբավայրին: Տաճարը փոխված, նոր հարսի մը զարդարանքներով շքեղացած, կարծես նադաշ Հովնաթանի անդրանիկ օրերուն բլ-

ւար: Հոգիները ավելի լուսավոր, դեմքերը այսօր ավելի թափանցիկ դարձած՝ զվարթ հոգիներու երանելի վիճակին մեջ կդառնվին: Տերը այցելության ելած է իր ժողովրդին: Այսօր, ավելի քան երբեք, շքեղազարդ պայծառացած է Մայր Տաճարը, շնորհիվ Կառավարության բարեհամ վերաբերմունքին: Ներս մտնող աղոթավորին հոգին կանցնին եսայի մարգարեին սա խոսքերը: «Որպէս հարսնայի զարդարեաց զնա» (Եսայի, ԿԱ 10):

Ովախության խոսքեր: Տենդագին աշխատանքներ, ժողովներ ու պատրաստություններ: Ի՞նչ են այս ամենքը, կհարցնե մեկը մյուսին: Պիտի վերցվի սպո ժողովը Լուավորչի Ս. Աթոռին վրայեն, պիտի դողանքեն դարձյալ ավետավոր զանգակները Ս. Կաթողիկեին, լուսավորչի Աթոռի վրա պիտի բազմի անոր արժանավոր հաջորդը: Գուշակովյուն, փափա՞ն, հոգեկան պահանջք: Ամենքն ալ, ամենքն ալ: Դոնփակ նիստի մեջ են հայ հոգմորական և աշխարհական պատգամավորները, էջմիածնա Մայր Տաճարի կամարներուն տակ: Աղոթք և երկյուղածովյուն, և ապա՝ ընտրություն: Զանգակները չեն լոեր այլև, ուրախության լուրը կտարածվի ամեն կողմէ: Սրտերը ուրախ, դեմքերը պայծառ, հոգիները զվարթ, երգ ի բերան, ամեն հավատացյալ հոգի կերպե շարականագրին հետ: «Եղ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա»: Աղոթք մը հոգինս՝ «Չնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին» և նորընտիր Հովվապետին, նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսին Ամենայն Հայոց, հոգեսր իշխանապետին և Հայրապետին Հայաստանյաց Ս. Եկեղեցվու: Ժողովով՝ Փլուստի ծովություն: «Արժանին տէրունական և արին փրկչական...»: Հազարավոր հավատացյալ աշքեր Ս. Սեղանին հառած և երկյուղած: «Արժանի արա զմեզ Տէր», — կլսվի ամեն կողմերին: «Աստված իմ, հոգեկան ի՞նչ ծարավ. — կկոկնեմ ի կինդիրենս: Սովոր պատարագը իր վերջավորության կմուտք կգործե Ս. Տաճարը: «Մարմին տէրունական և արին փրկչական...»: Հազարավոր հավատացյալ աշքեր Ս. Սեղանին հառած և երկյուղած: «Արժանի արա զմեզ Տէր», — կլսվի ամեն կողմերին: «Աստված իմ ի կոկնեմ ի կինդիրենս: Սովոր պատարագը իր վերջավորության կմուտք կետաթումքեր կկազմեն մինչև Վեհարանին ավագ զուրը: «Էս ա, էս ա, Վաղգեն Ա»: Հիացմունքի և կարոտի հառաշանքներ գեպի իրենց հոգմոր Հայոց և սիրեցյալ Հայրապետը: Զէ՞ որ Հայոց Կաթողիկոսը մարմնավոր հորմեն ավելի սիրելի է մեր ժողովրդին: Զէ՞ որ նա է միջնորդը մեր հոգիներուն և մեր Աստուծոյն միջև: Այլևս ամեն նկատում կանգ կառնե այս իրողության առջև...»:

Երկու տարի վերջը: Նորեն Ս. էջմիածնի կամարներուն տակ: Փոփոխություն ամեն քայլին և ամեն տեղ: Ո՞ւ են երեկվան տխուու հշշատակներուն մնացորդները: Կերպարանափոխած է ամեն բան և ամեն ոք Միայն էջմիածնին: Հապա երևա՞նը: Անձանաշելի երեկվանեն: Հայ ժողովրդի բազուկը կերտեն ու գեղեցկացուցեր է զայն: Հայ, գյուղացին իր ճակատի քրտինքը խառնած է անոր շաղախին, անոր այդիներուն ու հողին: Հայ ուսուցիչը իր միտքն է պարպած մեր մատաղ սերունդին, ու արհեստավորներու և արվեստագետներու մատները կերտած ու

գեղեցկացուցած են մեր հոգեկան արժեքները: Կայանք ու խինդ մնացած է լոկ ժառանգությունը սա ժողովրդին: Եվ դեռ ավելի՞ն, վաղը կհայտնաբերվի: էջմիածնի՞ն. մեր հավատքի կեդրոնն ու Սրբություն Սրբոցը, չէր կրնար անմասն մնալ վերանորոգման այս հզոր թափին մեջ: Եվ Ս. էջմիածնինը իր վագրի թափին մեջ է, փառքի փառք կերթա Մայր Աթոռը:

Կիրակի, սուրբ պատարագ, զանգակներ անվիրը: Հոգեկան ցնծատոնն է այսօր կարծես: Աղոթք եկեղեցին ներս: Պար ու հըմձվանք Տաճարին շուրջը: Տասնյակ ոչխարներու զենում: Մատաղի օրհնություն: Հայ ավանդական մատաղը՝ անբաժան ուստի պարտադրանքը՝ դարերու անմեռ հիշտակ կով: Թարեպաշտություն, ո՞ւստի, երազներու իրականացո՞ւմ: Այս, ամենքն ալ: Սովոր պատարագը կշարունակվի: Վեհափառը մուտք կգործե Ս. Տաճարը: «Մարմին տէրունական և արին փրկչական...»: Հազարավոր հավատացյալ աշքեր Ս. Սեղանին հառած և երկյուղածու: «Արժանի արա զմեզ Տէր», — կլսվի ամեն կողմերին: «Աստված իմ, հոգեկան ի՞նչ ծարավ. — կկոկնեմ ի կինդիրենս: Սովոր պատարագը իր վերջավորության կմուտք կետաթումք կողմերու կազմեն մինչև Վեհարանին ավագ զուրը: «Էս ա, էս ա, Վաղգեն Ա»: Հիացմունքի և կարոտի հառաշանքներ գեպի իրենց հոգմոր Հայոց և սիրեցյալ Հայրապետը: Զէ՞ որ Հայոց Կաթողիկոսը մարմնավոր հորմեն ավելի սիրելի է մեր ժողովրդին: Զէ՞ որ նա է միջնորդը մեր հոգիներուն և մեր Աստուծոյն միջև: Այլևս ամեն նկատում կանգ կառնե այս իրողության առջև...»:

Տակավի՞ն: Բաց են Մայր Տաճարին դռները: Ներսն են հավատացյաները: Քահանա Հայրերը իրենց պաշտոնին վուփու: «Մկրտի ծառայս յանում Հօր և Որդուու և Հոգույն Սրբոյք: Ամեն կիրակի, ամեն օր, թերևս հարյուղը անցնող մկրտառությունները: Քրիստոնյա կդառնան, և դեռ նոր մտածում մը՝ ուշայ կդառնան: Եվ ինչո՞ւ Հայ շգանակ, մանավանդ Հայաստանի մեջ: Զէ՞ որ ասկե հազար վեց հարյուդ տարիներ առաջ, մեր հոգիներու լուսավորիչը միլիոններ մկրտից մեր Մայրենի Հողին վրա, որպեսզի անոնք քրիստոնյա դառնան:

Կրացվին Մայր Տաճարի թանգարանին դռները հավատացյալ ժողովրդին առջև: Ներս կմտնեն հարյուդավոր այցելումները:

Կկենան երկյուղած՝ սկիհներու ցուցափեղկերում առջև օրորոն էլ հին-հին դարուց հիշատակներ», — կրացատրե թանգարանի վերատեսուչ հայր սուրբը Ահա Ս. Գեղարդը, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կողը մխած են անիրավները; Իր տուփը՝ նույնքան թանկարժեք և արվեստի գործ Ահա Սրբալույս Մեռոնի հրաշալի կաթսան, կիսով շափ լեցուն Ս. Մեռոնվէ: «Ես մեռնեմ նրա հրաշագործ զորովթյանը», — կըրկնեն հարյուրավոր բերաններ: «Թողեք, թողեք, քսեմ երեսս նրա կողերին»: «Հայր սուրբ շան, հայր սուրբ շան, սա իմ նվերը Ս. Մեռոնին»: Կլեցվի գանձանակը սուրբ կաթսային, և դեռ իրարու ետև շատ շատեր կարգով կուգան, ոմեղայ քեզ-ը իրենց բերնին մեց: Որքան կապված է հայ ժողովորդը Ս. Մեռոնին: Կըրչի այցելուներու թափորը ու կանգ կառնե ուրիշ ապակեղարաններու առջև: Մեր հայրապետներու գործածած թանկագին շուրջառները, սաղավարտները, խույրերը, գավազանները, սկիհի ծածկոցները, ամենքն ալ, ամենքն ալ նվեր հայ բարեպաշտ ու հավատացյալ ժողովրդն: «Աստված պահե, շեն ու պայծառ պահե մեր Ս. Էջմիածինը, մեկի տեղ հարյուր, մեկի տեղ հազար թող տա Տերը նրա գանձարանին»: Անվերջ օրհնովթյուն, գովի և սեր Սայր Աթոռին: Աստուծո Աջը, Լուսավորչի Աջը թող պահապան մնա ասոնց վրա: Մեր թանգարանի իրերը ցուցակագրված և ժամանակագրական կարգով դասավորված են երեկի հայ հնագետներու կողմե, և յուրաքանչյորդի տակը գոված է նվիրատուի անունը և թվականը:

Կայցելենք Հոգեոր Ճեմարանը Ս. էջմիածնի: Փառավոր շենք մը իր հարմարություններով: Կրարձանանք վերը իր աստիճաններեն, ու կկենանք մեծ դրան առջև պահ մը: Միտք կուգա էջմիածնի հին Ճեմարանը ու իր ծառայությունը Հայ Ազգին: Քանի՞ -քանի՞ երեկի մտավորականներ և հոգերուականներ ելած են այս հարկեն: Իր փառքի օրերուն Գեղարդան Ճեմարանը եղած է միակը գրեթե Արարատյան աշխարհին մեջ, որ գիտության լույս շամրած է ժարավ մտավորականության: Համաշխարհային առաջին պատերազմեն վերջ, ամեն բան վերածվեցավ անբնական վիճակի, ու այդ բախտին արժանացավ դժբախտաբար Ճեմարանն ալ: Խորհրդային կարգերու հաստատումն վերջ, երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի շանքերով, 1945-ին նորեն վերաբացվեցավ Ճեմարանը, այս անգամ Հոգեոր Ճեմարան անունվ, և ընդունվեցան հիսունե ավելի խոստուանալից պատանիներ՝ շարունակելու մտավոր այն գործը, որուն պետք ուներ Հա-

յաստանյաց Ս. Եկեղեցին: Կշարուանակվի ան մինչև մեր օրերը, տարվե տարի ավելի հաստատ և որոշ ծրագրով մը: Այսօր, շնորհիվ Վեհափառ Հայրապետի կրթանվեր շանքերուն և իր իսկ գլխավորությամբ, ուսուցչական կարող կազմի մը դասավանդությամբ, գրեթե սկսած է նախանձելի դառնալ: Պիտք է խոստավանիւ, թե տարիներե ի վեր ուսուցչական կազմը իր որոշ ծրագրով կատարած է գովելի աշխատանք: Հոգեոր Ճեմարանը այժմ ունի հինգ լրիվ դասարաններ, որոնց առաջին երեքը միջնակարգ դասարաններ են, իսկ վերի երկու կարգերը աստվածաբանական ուսմանց հետևող երկու դասարաններ՝ երեք տարիներու ծրագրով: Աշակերտության ընդհանուր թիվը այս տարի ավելի քան հիսուն է, որոնցմե տասը սարկավագներ են:

Հոգեոր Ճեմարանի հիմնական ուղղությունը կրոնական է Ճեմարանի ծրագիրը միր եկեղեցական մեծ դպրեկանքներու ուսումնական ծրագիրն է, իր ընդհանուր գծերուն մեց: Ուսման այդ ծրագրին մեջ եկեղեցական, աստվածաբանական, սուրբքրական առարկաներու կողքին մեծ տեղ է հատկացված նաև գրաբար լեզվին և հայ ժողովրդի պատմության, ուսաերեն և ֆրանսերեն լեզուներու ուսուցման: Ճեմարանը ավելի քան տասը տարվա գյուղելուն ունի և տված է իր համեստ, բայց որակով հունձքը՝ Հայ Եկեղեցին: Ճեմարանի հեռանկանը: Շատ մեծ և հուսադրիչ Վեհափառ Հայրապետին արտի մոտ հաստատությունն է Ճեմարանը: Վեհափառը ոչ մեկ զոհողության առաջ կանգ կառնե: Հատկապես վերջին երկու տարիներուն մեջ Ճեմարանը մուսեցած է ավելի իր հոգեոր նկարագրին և կոչումին: Այս տարի մանավանդ, Ճեմարանի ուսումնական մակարդակի բարձրացման համար, Վեհափառ Հայրապետը գրաբարի, հայ ժողովրդի պատմության և հայ մշակուլիթի պատմության զարկ տալու համար, Երևանին հրավիրած է կարող դասախոսներ: Անունները անոնց: Պատմական գիտություններու գոկտու: Արդու: և Երևանի Պետական պատմական թանգարանի դիրեկտոր Կ. Ղաֆարյան (հայ մշակուլիթի պատմություն), պատմական գիտություններու թեկնածու գոցենու Հ. Հարությունյան (հայ ժողովրդի պատմություն), բանասիրական գիտություններու թեկնածու գոցենու Վ. Վարագ Առաքելյան (գրաբար): Այս դասախոսները, նախորդ տարիներու դասախոսական որակյալ կազմի հետ միասին, լծված են աշխատանքի: Արդյո՞ւնքը այս բոլորին: Վաստահ ենք, որ կըլլա գոհացուցիչ և բեղմնավոր Ճեմարանին մեջ ամեն շաբաթ կանոնավոր կերպով կկարգացվին դասախոսություններ, գրական երեկոներ կկազ-

մակերպվին: Ուսանողությունը կկազմակերպելիք վիճաքանական երեկոներ, որոնք ա'լ ավելի կմշակեն ուսանողության միտքն ու հոգին: Այսօրվան ճեմարանի ուսանողությունը: Ան լրիդ փարածէ իր գործին և կոչումին: Վստահ ենք, թե ան պիտի իրականացնե իր վրա դրված մեծ հույսը:

Ես ալ, Վեհափառ Հայրապետի հրավերով, կոշկած եմ որպես վերատեսուլ իմ համեստրաժինը բերելու այս սուրբ հաստատութենեն ներս:

Ճեմարանի առաջին հարկին վրա կգտնվի Մայր Աթոռի գրադարանը, ուր կա մոտավորապես տասը հազար գիրք: Ուսանողության սիրելի անկյունն է գրադարանը: Իր ազատ ժամերում ուսանողությունը կհավաքվի և կկարդա այստեղ: Գրադարանը դեռ աղքատէ: արտասահմանը պետք է օգնի՝ ճոխացնելու համար զայն նվիրատվություններով:



Վար կիշնենք Հոգենոր Ճեմարանի զվարի ժխնուրութեն՝ շարունակելու համար մեր ալ-ցելությունը: Ճեմարանեն քայլ մը հեռու, և էշմիածին» ամսագրի խմբագրատունն է: Սա երկրորդ կրթական վառարանն է: Կմտնենք ներս: Մեզ ուրախությամբ կդիմավորե ծրուսաղեմի մեր հին տղաներեն, մեր սիրելի բարեկամ Ա. Հատիտյանը, որ խմբագրին է ամսագրին: Սեղաններու առաջ նստած կաշխատի ամսագրի խմբագրական կազմը: Ամսագրի դեմը: Ան Ամենայն Հայոց Հայրապետի պաշտոնական և կենդանի ձայնն է: Արժե՞քը: Ան իր կրոնական, եկեղեցա-պատմական և բանասիրական լուրջ բովանդակությամբ մեր կրոնական մամուկի մեջ իր պատվավոր տեղը կդրավել:

Հըտեւշու կանենք խմբագրատուննեն և մեր քայլերը կուղենք Մայր Աթոռի տարրեր քաֆիները աշխատանքի, գործունեության: Ահա Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչությունը, պր. Հ. Սեղմարյանի գլխավորությունը: Մայր Աթոռի կենդրուածած են Մայր Աթոռի Հաշվապահությունը, գանձապահությունը և վանքի շինարարությամբ զրայղող ճարտարապետական գորսենայակը, ճարտարապետ Արծրունի Գալիկյանի ղեկավարությամբ: Ամեն տեղ, բոլոր գրասենյակներում մեջ կտիրե մաքրություն, կանոնավորություն: Հաշվապահական մատյաններում առաջ նստած, կաշխատին հաշվապահները: Հաշվապահության պիտի ըսեմ, որ ես բավական կանոնավոր վիճակի մեջ գտա Մայր Աթոռի հաշվապահության աշխատանքը: Հաշվապահության կողքին կգրտնըի սեղանը ազգային-եկեղեցական ժողովին ընտրված կերստուագիտական հանձնաժողովին:

Հանձնաժողովը հաճախ կըլլա Մայր Աթոռին մեջ, մոտեն կհսկե աշխատանքներում և կզեկուցի Վեհափառ Հայրապետին իր գործունեության շուրջ: Հաշվապահության զրասենյակին կից կգտնվի վանքի դերձակատունը, որտեղ ալ ազնիվ արհեստավորներ, ամենայն կանոնավորությամբ, կաշխատին միաբանության, ուսանողության կարիքներուն բավարարման համար: Այստեղ կգտնվի նաև եկեղեցական անոթներու, սպասներու և զգեստներու վերանորոգության տոկորչանոց-արհեստանոցը:

Վեհարանի շենքին մեջ է Մայր Աթոռի գիվանատունը, գլխավորությամբ դիվանապետ պր. Հայկ Առաքելյանի: Պետք է ըսեմ, որ դիվանատան աշխատանքները ևս, բաղդատմամբ անցյալ օրերու, շափազանց լավ և կանոնավոր հումք մեջ են դրված: Այստեղ օրական կստացվին բազմաթիվ հեռագրեր և սամակներ, որոնց անմիջապես կպատասխանվի: Մայր Աթոռի դիվանատունը ամենօրյա հարաբերության մեջ է արտասահմանյան և ներքին մեր բոլոր թեմերուն և եկեղեցիներում հետո: Մայր Աթոռի թղթակցությունները ամենայն կանոնավորությամբ կպահպին հատուկ թղթաժրաներու մեջ:

Վեհարանի պարտեզի շենքերեն մեկուն մեջն է վանքին մոմատունը: Մոմը կկազմի վանքին ամենեն գլխավոր եկամուտը: Հազարավոր կիլոգրամներով մոմ կըրկվի մեր երկրի զանազան թիմերը, և արդյունքը կկեղունանա Ա. Էջմիածնի մեջ: Հայ ժողովրդի հոգին մեջ մնացած է անջնջ կերպով ավանդական մոմավառության գեղեցիկ սովորությունը: Հայ հավատացյալը լի կըրնար եկեղեցինեն ներս մտնել, առանց մոմ մը վառելու և իր ովատը կատարելու Ձէ՝ որ Քրիստոս, երբ Տաճար ընծայվեցավ դեռ քառասնօրյա մանուկ, Սիմեոն ծերունին զայն գրկելով աղաղակեց. «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց»: Խնչպես կարելի է հայ ժողովրդին համար Տիրոջ Տաճարը մտնել առանց լուսի:

Մոմատունն ու շատ հեռու, նույն պարտեզին մեջն է վանքին ատաղձագործարանը, ուր Յ-4 վարպետներ շարունակ աշխատանքի մեջ են, պատրաստելու համար վանքերու շինության և միաբանության անհրաժշտ փայտեղեն կարիքները: Հատուկ ճարտարապետի մը ցուցմունքներուն համաձայն կպատրաստվին վանական կահ-կարասիները: Ատաղձագործարանի բակին մեջն է վանքին ավանդական թոնիրը, որ վերցերս Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նոր բացվեցավ, մերթ ընդ մերթ միաբանության և ուսանողության համար ևս հայկական զավաշը հաց թիւելու համար: Կայե-

լենք նաև միաբանության և Հոգևոր Ծեմա-
րանի աշակերտության սեղանատումը: Մա-
քուր և կոկիկ սեղանատում մը սարքված է:
պատերուն վրա սուրբքրական դրվագներ
ներկայացնող գեղեցիկ նկարներով: Միաբա-
նությունը և ուսանողությունը միասին հճա-
շեն: Ճեմարանի աշակերտները կպահեն ճա-
շի պահուն վանքերու հատուկ ամենօրյա-
ընթերցումի սովորությունը, Ս. Գրքին կամ
կրոնական գրքերի Խոհանոցը թեև փոք-
րիկ, բայց կարելիության սահմանին մեջ
մաքուր է և ներկայանալի: Ճաշերուն տե-
սակը՝ լավ: Մոտ յոթանասուն հոգի միա-
սին կնստին ճաշի օրը երեք անգամ: Հսկա-
շենք մը գրասենյակներուն վրա, «Երեմիա
եպիսկոպոսի շենք» անվամբ ժանոթ, կծա-
ռայի իբրև միաբանական թաղ: Վերի հար-
կին մեջ կապրին միաբան եպիսկոպոսները,
վարդապետները և լսարաններու սարկավագ-
ները: Կամաց-կամաց կստեղծվին արդ շեն-
քին մեջ ալարգվան բնակարանային պա-
հանջըք գոհացնող բոլոր հարմարություննե-
րը: Ուսանողության ննջասենյակները առան-
ձինն են:



Թեմերու հոգատարությունը ամենօրյա
մտածումն է Վեհափառ Հայրապետի: Մեր
ներքին բոլոր թեմերը ունին իրենց առաջ-

նորդները և քահանաները: Հանապազ
պաշտամունք կկատարվի բոլոր եկեղեցի-
ներուն մեջ: Խոկ պատմական սրբավայրեր,
ովստատեղիներ, Վեհափառ Հայրապետի
կարգադրությամբ, կանոնավոր կերպով երի-
տասարդ վարդապետներ կողկին, Հոն կա-
տարելու համար հոգեոր պաշտամունք,
մկրտություն, սուրբ պատարագ և կենաց
բանին քարոզություն, ի մխիթարություն
անդ փութացող հազարավոր հավատացյալ-
ներու Վանքեն ներս սկսած է և կշարունակ-
վի շինարարությունը մեծ թափով: Կպարու-
պապատվի վանքին ամբողջ շրջապատը:
Կազմված են վերանորոգության նախագծերը
նոր Վեհարանի և վանքերու Հոփիսիմեի,
Գայանեի, Շողակաթի, Խոր Վիրապի, Գե-
ղարդի և այլ եկեղեցիներու և սրբավայրերու:
«Այսպիսի Քահանայապետ վայել է մեզ»:
Նորեն կճշմարտվին Երրայեցվոց թուղթին
խոսքերը: Մեր սիրելի Հայրապետը, արթուր
և եռանդուն, կվարե այս ամենքը, ի շինու-
թյուն և ի պայծառություն վերանորոգյալ
Մայր Աթոռի:

Աղոթք: Պահանջքը մեր Հոգիներուն:
Պարտավորությունը մեր ամենուն, վերստին
կրկնելու համար շարականագրին: Հետ.
«Ծնորհազարդ պայծառաց զգաւազան իշ-
խանութեան մերոյ Հայրապետին, զի օրհնես-
ցուք զՔեզ, Տէր, այժմ և յաւիտեան»:

